ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անուն Ազգանուն**
   Արսեն Թորոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   Առողջապահության նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Թբիլիսի, Վրաստանի Հանրապետություն, 2018 թ. օգոստոսի 5-6

4. **Հրավիրող կողմը**

   Վրաստանի Հանրապետության բռնազավթված տարածքներից բռնի տեղահանվածների, աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարար Դավիդ Սերգեենկո

5. **Գործուղման նպատակը**

   2018թ. հուլիսի 23-ին Ամստերդամում կայացած «Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ՄԻԱՎ վարակի և ուղեկցող հիվանդությունների դեմ պայքարին ուղղված քաղաքականության վերաբերյալ նախարարական երկխոսություն» թեմայով միջազգային նախարարական համաժողովի ընթացքում Վրաստանի Բռնազավթված տարածքներից բռնի տեղահանվածների, աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարար Դավիդ Սերգեենկոյի կողմից հրավեր եմ ստացել՝ աշխատանքային այց կատարելու Վրաստան: Այցի նպատակն էր զարգացնել երկկողմ փոխշահավետ համագործակցությունը:

6. **Քննարկված թեմաները**

   Այցի շրջանակում Առողջապահության նախարարության պատվիրակությունը հանդիպել է Բռնազավթված տարածքներից բռնի տեղահանվածների, աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարար Դավիդ Սերգեենկոյի և նրա առաջին տեղակալ Զազո Բոխուայի հետ: Վրաց գործընկերների հետ քննարկվեցին առողջապահության բնագավառում երկու երկրների միջև գործող համագործակցության հուշագրի պայմանները:

Քննարկման հատուկ թեմա էին Վրաստանում գործող առողջապահական համընդհանուր համակարգը, բժշկական ապահովագրության, բուժծառայության ֆինանսավորման մեխանիզմները և դրանց մատչելիությունը:
Օրակարգային հարցերից էին Հայաստանի և Վրաստանի դեղագործական շուկաներում և դեղերի մատչելիության ուղղությամբ իրականացվող բարեփոխումները:
Անդրադարձ է կատարվել Վրաստանում 2018 թվականի մայիսի 1-ից ուժի մեջ մտած ծխախոտի վերահսկողության մասին օրենքին, որով արգելվում է ծխախոտային արտադրանքի օգտագործումը ցանկացած տիպի հաստատությունում: Բարձր գնահատելով հասարակական վայրերում ծխախոտի արգելքը, ընդգծել ենք, որ Հայաստանը ևս ներկայումս քայլեր է ձեռնարկում այս ուղղությամբ և հետաքրքրվել օրենքի ընդունմանն ու ներդրմանն առնչվող հարցերով:
Այցի շրջանակներում հայկական պատվիրակությունը ծանոթացել է Վրաստանի առողջապահական ենթակառուցվածքներին, այցելել մի շարք բուժհաստատություններ, մասնավորապես՝ ընտանեկան բժշկության ազգային կենտրոն, Ֆրիդոն Տոդուայի անվան Կլինիկական բժշկության ինստիտուտ, «Նյու Վիզիոն» բժշկական համալսարան:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Վերը նշված հանդիպումների ընթացքում պատվիրակության անդամները վրացի գործընկերների հետ քննարկեցին երկու հարևան երկրների համար մի շարք կարևոր առողջապահական և բժշկագիտական թեմաներ: Մասնավորապես՝ ծխախոտի դեմ համատեղ պայքարին ուղղված միջոցառումների իրականացման, միջազգային տարբեր հարթակներում փոխշահավետ համագործակցության հնարավորությունները, զբոսաշրջիկների բժշկական օգնությանը և սպասարկմանը վերաբերվող հարցեր, անդրադարձ կատարվեց բժշկական համալսարաններում արտասահմանյան ուսանողների ներգրավման վրացական փորձին:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Որոշում կայացվեց վերանայել երկու երկրների միջև գործող միջգերատեսչական համաձայնագրի որոշ դրույթներ, մասնավորապես՝ միմյանց երկրներում գտնվող քաղաքացիներին անհետաձգելի բժշկական

օգնության տրամադրման վերաբերյալ: Ձեռք բերվեցին պայմանավորվածություններ՝ երկու երկրներում դեղեր և բժշկական սարքավորումներ գրանցող մարմինների հետագա համագործակցության, ինչպես նաև մանրածախ և մեծածախ շուկաներում դեղերի գների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հարցերում:

9. Գործուղվողները

Արսեն Թորոսյան	Առողջապահության նախարար
Արսեն Դավթյան	Առողջապահության նախարարի տեղակալ
Հովհաննես Հովհաննիսյան	Կրթության և գիտության նախարարի տեղակալ
Հայկ Սայադյան	Առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենի պաշտոնակատար

10. Ստորագրությունը, ամսաթիվը

21 օգոստոս 2018 թ.